ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 13.11.2024թ. գրությունների՝ տեղեկացվում է, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը, մեկ անձից գնումը: Մրցույթի տեսակներն են՝ բաց և փակ: Փակ մրցույթը լինում է նպատակային կամ պարբերական: Գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում: Մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով: Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում: Գնման ընթացակարգի արդյունքում կնքվում է պայմանագիր: Գնումները կարող են կատարվել ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բորսաներից՝ գնում կատարելու ընթացակարգով:»:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ ընտրված մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարն ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ: Օրենքի 2-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ «գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:»: Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ գնման գինը (պլանավորված կամ կանխատեսվող գնման գինը) ներառվում է պատվիրատուի կողմից կազմակերպվող գնման ընթացակարգի հրավեր տեքստում:

Միաժամանակ՝ Երևանի քաղաքապետարանը գնման ընթացակարգերը իրականացնում է էլեկտրոնային եղանակով, որի շրջանակում կարող են մասնակցության հայտ ներկայացնել ցանկացած մասնակից:

Գնման ընթացակարգը կայանում է անգամ այն պարագայում եթե մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հայտը համապատասխանում է հրավերի պայմաններին, միայն՝ եթե երկու փուլով մրցույթի անցկացման նպատակով կազմակերպված նախաորակավորման ընթացակարգին հայտ է ներկայացրել մինչև երեք մասնակից, ապա գնահատող հանձնաժողովի որոշմամբ կարող է՝ նախաորակավորման հայտարարությունը վերահրապարակվել, կազմակերպվել նախաորակավորման նոր ընթացակարգ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ